ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/185

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.07.2021թ. թիվ 26/26/11258-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 09.07.2021թ. թիվ 475 գրության հիման վրա, 13.07.2021թ. թիվ 26/26/11258-2021 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/185 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.07.2021թ. թիվ 475 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» և «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրերով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրերով «Ազուռ» ՍՊԸ-ն ստանձնել է պայմանագրերով սահմանված շաքարավազի և արևածաղկի ձեթի մատակարարման պարտավորությունները:

Տեղեկացնում ենք, որ «Ազուռ» ՍՊԸ-ն պատշաճ ձևով չի իրականացրել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները: «Ազուռ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են պահանջվող քանակի վերաբերյալ պատվերներ, սակայն վերջինս հրաժարվել է ապրանքների մատակարարումից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/185 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել են թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» և «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրերով պետության կարիքների համար

ապրանքի մատակարարման պայմանագրերը (հետայսու նաև՝ Պայմանագրեր), որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 31.08.2021թ.:

3. ԹԻվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 30.04.2021թ.:

4. ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 469 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ազուռ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2021թ. կնքված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Ազուռ» ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերը ստանալու հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով հաստատված 1500 կգ շաքարավազից մատակարարել է 900 կգ-ը: ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 04.06.2021թ. և 23.06.2021թ. պատվերի միջոցով «Ազուռ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին և բազմիցս հեռախոսազանգով տեղեկացվել է անհրաժեշտ քանակի մատակարարման վերաբերյալ, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից շաքարավազի մատակարարում չի իրականացվել»:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-Ն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 15-ին կնքված թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» ծածկագրով Պայմանագիրը և

Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 543000 ՀՀ դրամի որակավորման և 54300 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: (...)»:

5. ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 470 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ազուռ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2021թ. կնքված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Ազուռ» ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերը ստանալու հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով հաստատված 1000 լիտր արևածաղկի ձեթից մատակարարել է 700 լիտրը: ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 04.06.2021թ. և 23.06.2021թ. պատվերի միջոցով «Ազուռ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին և բազմիցս հեռախոսազանգով տեղեկացվել է անհրաժեշտ քանակի մատակարարման վերաբերյալ, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից արևածաղկի ձեթի մատակարարում չի իրականացվել»:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-Ն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 15-ին կնքված թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրով Պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 849000 ՀՀ դրամի որակավորման և 84900 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: (...)»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 08.07.2021թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2021թ. թիվ 26/26/11258-2021 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 09.07.2021թ. թիվ 475 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել են թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» և «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրերով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրերը, որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 31.08.2021թ.:

ԹԻվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 30.04.2021թ.:

ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 469 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ազուռ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2021թ. կնքված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Ազուռ» ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերը ստանալու հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով հաստատված 1500 կգ շաքարավազից մատակարարել է 900 կգ-ը: ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 04.06.2021թ. և 23.06.2021թ. պատվերի միջոցով «Ազուռ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին և բազմիցս հեռախոսազանգով տեղեկացվել է

անհրաժեշտ քանակի մատակարարման վերաբերյալ, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից շաքարավազի մատակարարում չի իրականացվել»:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-Ն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 15-ին կնքված թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/13-1» ծածկագրով Պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 543000 ՀՀ դրամի որակավորման և 54300 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: (...)»:

ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 470 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ազուռ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2021թ. կնքված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Ազուռ» ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերը ստանալու հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով հաստատված 1000 լիտր արևածաղկի ձեթից մատակարարել է 700 լիտրը: ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 04.06.2021թ. և 23.06.2021թ. պատվերի միջոցով «Ազուռ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին և բազմիցս հեռախոսազանգով տեղեկացվել է անհրաժեշտ քանակի մատակարարման վերաբերյալ, սակայն «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից արևածաղկի ձեթի մատակարարում չի իրականացվել»:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-Ն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 15-ին կնքված թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1» ծածկագրով Պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 849000 ՀՀ դրամի որակավորման և 84900 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: (...)»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 08.07.2021թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրերի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն իր և ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված Պայմանագրերով նախատեսված ապրանքների մատակարման ժամկետները խախտել է 3 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրերի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.07.2021թ. թիվ 26/26/11258-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**